

նախընտրեցին հրաժարիլ աշխարհի վաղանցուկ հաճույքներէն, մտնելու համար անհամար սիրտերէ ներս:

Միւլեռքահայութեան համար, Մեղզոնեանի շրջանաւարտներէն շատեր եղան մշտավառ այն կայմերը, որոնք լուսաւորելու գացին անսր խաւարած ճակատագիրը: Ու կտարեցին անոնք այս առաքելութիւնը՝ յաճախ ի գին աննկարագրելի զոհողութեանց, բայց միշտ կորսով ու նաւերումով մը, որոնք հայ սուտեցչին յատկանիշներն են միայն:

Եթէ մեր ֆիզիքական գոյութիւնը կը պարտինք մեր հօրը և մօրը, մեր գիտակցական կեանքի, ծնունդի իրաւունքը կ'երթայ Մեղզոնեան կրթական Հաստատութեան՝ անառարակոյս:

Ու այս վերջինն է որ աւելի աղուսը է ու արժէք կը ներկայացնէ անհատի մը կեանքին համար, քան առաջինը, որովհետեւ ան է որ պատասխանատու պիտի նկատուի առաւելաբար անոր տպագոյ գործունէութեան մէջ:

Այս պանծալի վարժարանն է որ, ո՛չ թէ միայն խաղաղ նաւահանգիստ մը հանդիսացաւ, աւլու համար գուրգուրանք հայ ժողովուրդի գաւակներուն, այլ նաև առաւ սնունդ՝ մաքի ու սրտի:

Արդեօք մեզմէ քանի՞ հոգի հնարաւորութիւնը պիտի ունենային նման տակուն ու ասոճային սուսմ մը առնելու, եթէ չըլլար Մեղզոնեանի հիւրընկալ յարկը: Քանի՞ հոգի մեզմէ ուղեկորոյս պիտի չթափառէին օտար երկինքներու տակ, եթէ բախաւոր օր մը չբացուէր ասկէ ճառագոյթող լոյսի աղբիւրը:

Եւ ասկաւին քանինե՞ր մեզմէ պիտի ունենային այս գեղեցիկ առիթը, ստանալու հայկական դաստիարակութիւն:

Ուրեմն՝ ամէն մէկ Մեղզոնեանցիէն կը պահանջուի ըմբռնել Մեղզոնեանի դերը, զայն ամէնուրեք գնահատել ճշմարտապէս, սիրել զայն, բարերարներու հանգէպ երախտագէտ գանուիլ և այսպիսով անմահացնել զիրենք:

Մեզմէ իւրաքանչիւրը՝ պէտք է գիտակցօրէն լծուի ու պատրաստուի Մեղզոնեանցիի դերին, որպէսզի կարենայ դառնալ այն կամուրջը, որ անշեղօրէն և անպայմանօրէն կ'առաջնորդէ աստանդական հայրդիները փրկարար նաւակայքին՝ այսինքն Արարտաի շուքին և հովանիին տակ բարգաւաճող արեւափառ հայրենիքին:

ՏԻԳՐԱՆ ԲԱԶԻԿԵԱՆ  
ԺԱ. Դասարան